

## ՅԱԿՈԻՏ ԱԼ-ՀԱՄԱՎԻ

Արաբ աշխարհագիր Յակուտ Աբու Աբդալլահ Շահաբադդինը ծնվել է 1178 թվականին՝ Փոքր Ասիայում, հունական ընտանիքում։ Մանուկ հասակում նա գերի վերցվեց արաբական մի արշավախմբի կողմից և տարվեց Բաղդադ, որտեղ վաճառվեց Համա քաղաքից մի վաճառականի, որը հաստատված էր խալիֆայական մայրաքաղաք Բաղդադում և կոչվում էր Ասկար իբն Իբրահիմ ալ-Համավի։ Այդ է պատճառը, որ Յակուտը կոչվում է նաև «ար-Ռումի» (հույն), «ալ-Համավի» (Համադի՝ իր տիրոջ ծննդավայրի անունով) և «ալ-Բաղդադի» (Բաղդադցի՝ այնտեղ բնակվելու համար)։

Առևտրական գործերով երիտասարդ տարիքից նա սկսում է ճամփորդել։ 1213—1214 թվականներին այցելում է Թավրիզ, Մոսուլ, Ասորիք, Եգիպտոս, 1215 թվականին ուղևորվում է դեպի Խորասան և հասնում մինչև Հնդկաստան։

Վաղ հասակից Յակուտն սկսեց զբաղվել ընթերցանությամբ։ Կարդաց Մերվ քաղաքի մատենադարանի գրքերը։ Այդ ժամանակ էր, որ նա ծրագրեց դրել աշխարհագրական մի բառգիրք։ Երկու տարի Մերվում մնալուց հետո նա գնաց Խիվա և Բալխ։ Այս վերջին քաղաքումն էր գտնվում, երբ նա լսեց մոնղոլների կողմից Խիվայի և Բուխարայի դրավման լուրը։ Այդ աղետը խորը սարսափ պատճառեց նրան և իր ամբողջ ունեցվածքը թողնելով Բալխում, 1220 թվականին նա փախավ Մոսուլ։ Այստեղ 1224 թվականի մարտի 13-ին նա ավարտեց իր աշխարհագրական բառգիրքը, իսկ սրբադրական ու խմբագրական աշխատանքները վերջացրեց 1227 թվականին։ Մեռավ 1229 թվականի օգոստոսի 29-ին Հալեպում։

Յակուտի գործերն են։

1. Քիթաբ Մուշսում ալ-Բուլդան (Աշխարհագրական բառգիրք)։
2. Մարասիդ ալ-Իթթիլա (Նախորդի ամփոփումն է)։

3. Իրշադ ալ-Ալիբբու լի Մոկտադիր մին Ջամհարատ ան-Նասաբ (Քերականագետների ուղեցույց կամ բառարան):

4. Մոշտարիք (Աշխարհագրական տեղեկությունների բառարան):

5. Մուշամ աշ-Շուարա (Բանաստեղծների բառարան):

6. Մի հավաքածու արաբական ցեղերի ճյուղագրության և այլն:

Ստորև տալիս ենք «Քիթաբ Մուշամ ալ-Բուլդան»-ի («Աշխարհագրական բառարան») այն հատվածների թարգմանությունը, որոնք տեղեկություններ են պարունակում Հայաստանի և հարևան երկրների, հատկապես Ադրբեջանի և Վրաստանի մասին:

Հրատարակությունը, որից կատարված է ներկա թարգմանությունը, բաղկացած է 6 հատորից և կրում է հետևյալ խորագիրը.

کتاب معجم البلدان تأليف الشيخ الامام شهاب الدين ابی  
عبدالله یاقوت بن عبد الله الحموی الرومی البغدادی

Jacut's Geographisches Wörterbuch aus den Handschriften  
zu Berlin, St. Petersburg und Paris herausgegeben von  
Ferdinand Wustenfelf, Leipzig, 1924.

Տեղանունները տրված են նախ հայերեն տառերով՝ ըստ արաբական հնչման և ընդունված տառադարձությամբ, կողքին՝ ըստ բնագրի՝ արաբական տառերով, հետո միայն տրված է տեղանվան ծանոթ և ընդունված ձևը հայերի մոտ՝ այն դեպքում, եթե տարբերվում է արաբական ձևից:

Արաբական մի շարք բաղաձայն և կիսաձայն կոկորդային հնչյուններ անհնար է հարադատորեն արտահայտել հայերեն տառերով: Հետևել ենք ընդհանուրի կողմից ընդունված տառադարձությանը, իսկ ծանոթ և արդեն գործածության մեջ մտած բառերի ուղղագրությունը պահել ենք նույնությամբ:

Այսպես, տառադարձել ենք՝ ۛ = Բ, ۞ = Թ՝ բառի սկզբում, և S, Կրբեմն, բառամիջում, ۛ = Ս կամ Թ, ۞ = Ջ կամ Ծ, ۟ = Դ, ۠ = Զ կամ, մոռճճամա և դաժ պարագայում՝ Դ, ۡ = Դ, ۢ = Թ, ع = Օ կամ Ա. համաձայն ձայնանշին, ۣ = Կ կամ Դ, ۤ = Ք: